ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2020թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը, Վահագն Ավագյանը, Արման Ափինյանը, Գայանե Քալանթարյանը, Սեյրան Ղամբարյանը, Արման Սարգսյանը, Խորեն Վարդանյանը, Դավիթ Սիմոնյանը, Հայկազ Մովսիսյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Արեն Խաչատրյանը, Տիգրան Նազարյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Արմեն Ավետյանը, Արման Սիրադեղյանը, Քրիստ Մարուքյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝

Մարիամ Ապերյանը, Հրաչիկ Ղամբարյանը, Դավիթ Հակոբյանը

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Արևիկ Լոքյանը:

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Մարինե Հովհաննիսյանը, Վահե Դոխոյանը, Սոխակ Մելքոնյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Համլիկ Խլոպուզյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը, Սուրեն Կարապետյանը, Կարինե Ղուկասյանը, Անահիտ Կարապետյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Սեյրան Աղաբեկյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը, համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Մամիկոն Ասլանյանը ժամը 11.15-ին նիստը հայտարարեց բացված: Նիստին ներկա էին 23 ավագանու անդամներ:

(Վանաձորի ավագանու 23.12.2020թվականի հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջությամբ առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում): Նիստը վարողն առաջարկեց օրակարգի մեջ ներառել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում Վանաձոր համայնքի ավագանու

խմբակցությունների փորձագետների և գործավարների ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափերը սահմանելու մասին հարցը

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախապես ներկայացված որոշման նախագծով օրակարգը:

Քվեարկությամբ Կողմ՝ 11, /դեմ՝ 12/ Գ.Քալանթարյան, Խ.Վարդանյան, Ս.Ղամբարյան, Տ.Նազարյան, Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան, Ք.Մարուքյան, Ա.Ավետյան, Ա. Սիրադեղյան, Հ. Սիմիկյան, Վ. Կռոյան/, չընդունվեց որոշում:

ԲՀԿ խմբակցության ավագանու անդամ Հրաչիկ Ղամբարյանի առաջարկով քվեարկության դրվեց օրակարգն՝ առանց 11-րդ հարցի:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, դեմ՝ 8/ Ա. Փելեշյան, Ա. Գրիգորյան, Հ. Մովսիսյան, Դ. Սիմոնյան, Ա. Սարգսյան, Ա. Լոքյան, Վ. Ավագյան, Ա. Ափինյան/, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց նախապես ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգ՝

1.Վանաձոր համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 23-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին զեկ. Մ.Ասլանյան

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին զեկ. Վ.Գրիգորյան

3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

զեկ Լ.Դավթյան

5.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

6.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 147 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Մացակյան

7.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 147 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Մացակյան

8.«Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպության Վանաձորի մասնաճյուղին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տարածքի պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

9.Վանաձոր համայնքի ավագանու 28 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 103 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

10.«Առափնյա» համատիրությանը վարձակալությամբ տարածք հանձնելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

11.Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս.Աբովյան

12.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ.Ս.Աբովյան

13. Վանաձոր քաղաքի Տարոն-4 Կոտեջ թիվ 13 հասցեում գտնվող սեփականաշնորհված բնակարանի (քոթեջի) զբաղեցրած հողամասը Ցոլակ Վոլոդյայի Մաթևոսյանին, Անահիտ Իվանի Վարդումյանին, Միեր Ցոլակի Մաթևոսյանին և Դավիթ Ցոլակի Մաթևոսյանին սեփականության իրավունքով անհատույց տրամադրելուն համաձայնություն տալու մասին

զեկ. Ս.Աբովյան

14.Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-4 թիվ 21-23 շենքերի հարավային մասում գտնվող պուրակն անվանակոչելու մասին

զեկ. Ս.Աբովյան

15.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում Վանաձոր համայնքի ավագանու խմբակցությունների փորձագետների և գործավարների ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափերը սահմանելու մասին

Զեկ. Ա. Օհանյան

16. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ. Ասլանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1.ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Մինչ հարցի զեկույցը ավագանու անդամ Ա.Կարապետյանը ներկայացավ նիստին:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, դեմ՝ 9/ Մ. Ապերյան, Հ. Ղամբարյան, Դ. Հակոբյան, Ք. Մարուքյան, Ա.Ավետյան, Ա. Սիրադեղյան, Հ. Սիմիկյան, Ա. Կարապետյան, Վ. Կռոյան/, ընդունվեց որոշում:

Քվեարկությունից հետո ավագանու անդամ Ա.Սարգսյանը լքեց նիստերի դահլիճը և չվերադարձավ:

2.ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 21, դեմ՝ 1/ Ա. Ավետյան/, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, դեմ՝ 1/ Ա. Ավետյան/, ընդունվեց որոշում:
Քվեարկությունից հետո ավագանու անդամ Ա.Ավետյանը լքեց նիստերի դահլիճը և չվերադարձավ:

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ձեռնպահ՝ 2/ Ք. Մարուքյան, Վ. Կռոյան/, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 147 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /Շախմատի դպրոց/:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Գևորգ Մացակյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, դեմ՝ 3/ Հ. Ղամբարյան, Դ. Հակոբյան, Մ. Ապերյան/, ձեռնպահ՝ 1 / Գ. Քալանթարյան/, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 147 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /ՕՀՄՄՄԴ/:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Գևորգ Մացակյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, դեմ՝ 1/ Ք. Մարուքյան/, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - .«Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպության Վանաձորի մասնաճյուղին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տարածքի պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, դեմ՝ 10/Ք. Մարուքյան, Ա. Սիրադեղյան, Հ. Սիմիկյան, Ա. Կարապետյան, Վ. Կռոյան, Գ.Քալանթարյան, Վ.Ավագյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան, Մ.Ապերյան/, ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 28 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 103 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, դեմ՝ 4/ Ք.Մարուքյան, Ա.Սիրադեղյան, Հ.Սիմիկյան, Ա.Կարապետյան/, ընդունվեց որոշում:

Քվեարկությունից հետո ավագանու անդամ Ա.Սիրադեղյանը լքեց նիստերի դահլիճը և չվերադարձավ:

9. ԼՍԵՑԻՆ - «Առափնյա» համատիրությանը վարձակալությամբ տարածք հանձնելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 3/ Ք. Մարուքյան, Հ. Սիմիկյան, Վ. Կռոյան/, ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր քաղաքի Տարոն-4 Կոտեջ թիվ 13 հասցեում գտնվող սեփականաշնորհված բնակարանի (քոթեջի) զբաղեցրած հողամասը Ցոլակ Վոլոդյայի Մաթևոսյանին, Անահիտ Իվանի Վարդումյանին, Միեր Ցոլակի Մաթևոսյանին և Դավիթ Ցոլակի Մաթևոսյանին սեփականության իրավունքով անհատույց տրամադրելուն համաձայնություն տալու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-4 թիվ 21-23 շենքերի հարավային մասում գտնվող պուրակն անվանակոչելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում Վանաձոր համայնքի ավագանու խմբակցությունների փորձագետների և գործավարների ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափերը սահմանելու մասին:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Քննարկումների ընթացքում աշխատակազմի քարտուղարն առաջարկեց «հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար» բառերը փոխարինել «հունվարի 1-ից մինչև խմբակցությունների գործունեության դադարումը» բառերով:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ - Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2021 թվականի փետրվարի 12-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2021 թվականի փետրվարի 12-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 11:00-ն:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Հ. Զարմանյանը